ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ավագ նախադպրոցականի հաղորդակցական ունակությունների զարգացման մանկավարժական պայմանները

Վերապատրաստվող՝ Բաղալյան Աստղիկ Ժորայի Արտաշատ համայնքի Դվին գյուղի մանկապարտեզ ՀՈԱԿ

Երևան 2022

# Բովանդակություն

Ներածություն .....1

Գլուխ 1. Հաղորդակցական կարողությունները և դրանց զարգացման մանկավարժական պայմանները .....5

1.1 «Հաղորդակցական կարողություն» հասկացության էությունը.....5

1.2 Ժամանակակից մեդիամիջավայր, դրա նշանակությունը և կարևորությունը երեխայի մոտ որպես հաղորդակցական ունակություն .....8

Գլուխ 2. Հետազոտական մաս։ Ավագ նախադպրոցականի հաղորդակցական ունակությունների զարգացման մանկավարժական պայմանները դերախաղի միջոցով.....11

Եզրակացություն .....18

Օգտագործված գրականության ցանկ .....20

# Ներածություն

***<u>Թեմայի արդիականությունը:</u>*** Ամբողջ աշխարհում խոսքի և հաղորդակցման դժվարություններ ունեցող երեխաների թիվը գնալով ավելանում է՝ կենդանի շփման պակասի, այդ շփումը թվային տեխնոլոգիաների դաշտ և մեդիամիջավայր տեղափոխելու հետևանքով: 21-րդ դարում հրատապ է դարձել մանկահասակ երեխաների հաղորդակցման կարողությունների ձևավորման խնդիրը և այն մշտապես արդիական է: Հաղորդակցման կարողություններ ասելով հասկանում ենք տարբեր իրավիճակներում երեխաների արագ կողմորոշումն ու վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման միջոցների ազատ կիրառումը:

Անվիճելի է, որ ժամանակակից պայմաններում երբեք չի կարելի ուսուցումը մեկնաբանել որպես երեխաների մեջ միայն գիտելիքների, կարողությունների և հմտությունների որոշակի համակարգի ձևավորում: Այժմ խնդիր է դրվում ուսուցումը կազմակերպել այնպես, որ այն առավելագույն չափով ապահովի երեխաների մտավոր զարգացումը: Դրա համար էլ սովորաբար խոսում են ոչ թե պարզապես ուսուցման, այլ զարգացնող ուսուցման մասին: Զարգացումըե դառնում է մանկավարժական գործնթացի գլխավոր բառը, որպես "սովորել" հասկացության այլընտրանք:

Մանկահասակ երեխաների հաղորդակցման կարողությունների ձևավորման արդիականությունը պայմանավորված է արտաքին միջավայրի հետ արդյունավետ փոխներգործելու ընդունակությունների զարգացմամբ՝ դերային խաղերի միջոցով:

Դերային խաղն արդյունավետ իրականացնելու նախապայմանը առաջարկվող դերային իրավիճակի՝ իրականությանը հնարավորինս մոտ լինելու մեջ է: Հոգեբանության մեջ խաղի վերաբերյալ կան բազմաթիվ տեսություններ: Կարլ Գրուսը գտնում էր, որ խաղը հանդիսանում է երեխայի օրգանիզմի անգիտակից պատրաստակամությունը կյանքին: Խաղի աղբյուր են հանդիսանում բնազդները, կենսաբանական մեխանիզմները: Շիլլերը և Սպենսերը խաղը դիտում էին, որպես երեխայի մոտ կուտակված ավելորդ էներգիայի վատնում: Կ. Բյուլերը խաղի աղբյուր համարում էր հաճույքը, որը երեխան ստանում է խաղից: Զ. Ֆրոյդը գտնում էր, որ երեխան խաղում է անլիարժեքության կոմպլեքսից դրդված: Երեխան, չունենալով հնարավորություն իրական կյանքում լինելու բժիշկ, վարորդ և այլն, այն փոխարինում է խաղային դերերով: Այս բոլոր տեսությունները խաղի հիմքում դնում էին

բնազդները, կենսաբանական մեխանիզմները և գտնում էին, որ խաղի ցանկությունը երեխայի մոտ ծագում է սպոնտան կերպով՝ ինքնաբերաբար: Այդ նպատակով վերլուծենք երեխաների հաղորդակցման կարողությունների զարգացումը դերային խաղերի միջոցով, որն էլ ապահովում է մեր կողմից ընտրված թեմայի արդիականությունը և հրատապությունը:

***Ուսումնասիրության նպատակը:*** Տվյալ աշխատանքի նպատակն է ներկայացնել դերայի խաղերի ազդեցությունը երեխաների հաղորդակցական կարողությունների ձևավորման վրա: Ուսումնասիրությունների նպատակից ելնելով առաջ են քաշվել հետևյալ ***խնդիրները .***

1. Ներկայացնել հաղորրդակցական կարողությունների էությունը.
2. Ուսումնասիրել դերային խաղերի ազդեցուությունը երեխայի հաղորդականցական կարողության վրա:

# Գլուխ 1. Հաղորդակցական կարողությունները և դրանց զարգացման մանկավարժական պայմանները

## 1.1 «Հաղորդակցական կարողություն» հասկացության էությունը

Առհասարակ, «հաղորդակցական կարողություններ» հասկացությունը երեխայի մակարդակով դիտելիս պետք է այն հասկանալ նախ որպես այդ տարիքի երեխաների համար սոցիալական ադապտացման միջոց, որն իր մեջ ներառում է մի շարք այլ հասկանությունների և երևույթների համալիր: Վերջիններիս մեջ հարկ է առանձնացնել երեխայի սոցիալական ուղղվածության անհատական-հոգեբանական այնպիսի որակներ, ինչպիսիք են ապրումակցումը, կոնտակտը, բարեհամբույր գտնվելը, բացի այս ամենը, «հաղորդակցական կարողություններ» հասկացության տակ պետք է նշել սոցիալ-հաղորդակցական գործունեության գիտելիքների մակարդակը, որի տակ հիմնականում կարելի է նշել առանց կոնֆլիկտների շփման ունակությունները, համապատասխան վարքը, միջանձնային իրավիճակներում ճիշտ կողմորոշումը և այլն: Մասնագետներից ոմանք «հաղորդակցական կարողություններ» հասկացության տակ խիստ կարևորում են նաև սոցիալականացման ընթացքում երեխայի պահանջն ու ցանկությունը մտնել սոցիալ-հաղորդակցական գործունեության մեջ, վերլուծել, հնարավորինս ադեկվատ լինել, հետևել սեփական վարքին, խոսքին: Վերջինիս հետ կապված նշենք նաև, որ այս ամենը հատկապես կարևորվում են մեծահասակների /ծնողներ, հարազատներ, մանկավարժական կազմ/ հետ շփվելիս: Ինչպես նշում է Ս. Շումանը, երեխաների մոտ առաջանում է այսպես ասած՝ մեծահասակ լինելու զգացողություն, որի ազդեցությամբ էլ պայմանավորված կարելի է նկատել այնպիսի երևույթներ, ինչպիսիք դիմադրությունն է մեծահասակների պահանջների հանդեպ, սեփական իրավունքների, ցանկությունների հիվանդագին ընդունումն ու ակտիվորեն պաշտպանությունը:[1] Այս ամենն իհարկե, դժվարեցնում են մեծահասակի և երեխայի հաղորդակցման ընթացքում մտերմիկ մթնոլորտ ստեղծելու շանսերն ու բարդություններ առաջացնում երեխայի սոցիալականացման գործընթացում:

[1] Шуман С.Г. Школьный конфликт глазами психолога. // Педагогика, 2001. №9, Է ջ 46-48:

Հաղորդակցական կարողությունների ձևավորման մեկ այլ մակարդակ է ստեղծվում երեխայի և իր հասակակիցների հետ շփման ընթացքում: Այստեղ արդեն երեխաների մոտ հաղորդակցումն առաջ է գալիս փոխադարձ հետաքրքրությունների, վստահության, շրջապատող երևույթների հանդեպ ունեցած համատեղ ընկալման և նույնարժեք երևույթների հայտնաբերման շնորհիվ: Հասակակիցների հետ խիստ սերտ հաղորդակցական կարողությունների հաշվին ձևավորվում են /կարող է նաև հետագայում ձևավորվել/ փոքրիկ խմբեր /կոլեկտիվներ/, որտեղ կարող են գործել մենահատուկ օրենքներ, կանոններ և այլն: Իհարկե, հասկանալի է, որ այս ամենը դիտվում է փոքր, մակերեսային մակարդակներում, քանի որ, չմոռանանք, որ խոսքը գնում է երեխայի մասին, բայց սա մեզ թույլ չի տալիս չնշել, որ հենց երեխայի տարիքում վերոնշալ երևույթների առկայությունն է ապահովում երեխայի անձի ձևավորման և սոցիալականացման ողջ ընթացքում հաղորդակցական հմտությունների զարգացումը, կատարելագործումը, լիիրավ տիրապետումն ու կիրառումը: Հասակակիցների հետ շփման, հաղորդակցական հմտությունների ստեղծման հարցում հավելենք նաև, որ երեխայի մոտ չենք կարող առանձնացնել առանձնապես տարբերվող հաղորդակցում հակառակ սեռի ներկայացուցչի հետ: Երեխայի համար իր հասակակցի սեռային առանձնահատկությունները նույնականացված են իր իսկ սեռային առանձնահատկություններին, և երեխան հաղորդակցման գործընթացում խիստ չի առանձնացնում հակառակ սեռին այնպես, ինչպես դա կաներ դեռահասը:[2]

Հարկ է նշել, որ հաղորդակցման կարողություններին անդրադառնալ երեխային ուսումնասիրելիս մեզ ստիպում են մի քանի հանգամանքներ. նախ այն, որ մուտք գործելով մանկապարտեզ սոցիալական կառույց /իր համար բոլորովին նոր վայր/, երեխան բացահայտում է իր սոցիալական տարածության մեջ մի նոր վայր, որտեղ կան մարդկային հարաբերություններ, հաղորդակցում, շփում: Բացի դա, ուսումնական պարտականությունները ստեղծում են պատասխանատվություն, որն էլ արտահայտվում է մանկավարժական կազմի հետ անընդհատ շփվելիս, հաղորդակցվելիս, ինչը ևս ցույց է տալիս հաղորդակցման կարողություններին անդրադառնալ հենց առաջին իսկ տարիներից: Չմոռանանք, նաև նշել երեխայի դրդապատճառների /մոտիվացիաների/ մասին: «Ես պետք է» դրդապատճառը վերածվում է «Ես ուզում եմ»-ի և սոցիալական նոր

[2] Мухина В.С. Возрастная психология: феноменология развития, детство, отрочество: Учебник для вузов. – М.: Академия, 2003, էջ 141-147:

սպասելիքների արդարացման ճանապարհին երեխան ձեռք է բերում հաղորդակցական նորանոր կարողություններ, հմտություններ: Ոչ պակաս կարևոր է այն հանգամանքը, որ առաջին անգամ մանկապարտեզն մեկ է ուսումնական գործընթացում երեխայի առջև դնում ճիշտ և գրագետ խոսելու պահանջներ, որոնք անընդհատ բավարարելու համար երեխան պետք է ձգտի տիրապետել գրագետ ու վարժ կոնկրետ խոսքի, մտքի: Վերջին հանգամանքը հաճախ ստիպում է երեխային շփվել, ստեղծել հաղորդակցական հմտությունների ձեռքբերման տարատեսակ առիթներ: Վերջին հանգմանքի հետ կապված, լիովին համաձայնվելով հայտնի մանկավարժ, տեսաբան Ժան Պիաժեի հետ, նշենք, որ երեխայի մտքի, խոսքի, հաղորդակցական կարողությունների, շփման ունակությունների ձևավորման գործում ամենամեծ դերը մայրենի լեզվի յուրացման և տիրապետման գործընթացի դերն է: Այսինքն, խոսքային ազդեցության արդյունավետությունը պայմանավորված է լեզվական միջոցների հարստությամբ ու բովանդակությամբ: Խոսքն ինքնին հաղորդակցման ամենատարածված միջոցն է, թեպետ, հաղորդակցման միջոց է ոչ միայն խոսքային վերբալ տեսակը /գրավոր և բանավոր/, այլև՝ ոչ խոսքայինը: Բնականաբար, հաղորդակցման ընթացքում, իր դերով ու նշանակությամբ, առանձնանում է խոսքային միջոցը, որովհետև վերջինս բնորոշ է միայն մարդկանց և, բացի դրանից, հանդես է գալիս որպես հաղորդակցական կարողությունների ձեռքբերման ամենաուժեղ գրգռիչ:

Այսպիսով, հաղորդակցական կարողությունների յուրացմամբ պայմանավորված առանձնացնում ենք հաղորդակցման միասնական գործընթացի պայմանականորեն առաջադրված 3 կողմեր. տեղեկատվության փոխանցում, փոխազդեցություն, փոխադարձ ընկալում: Ինչ վերաբերում է հաղորդակցման տեսակներին, ապա նշենք, որ հաղորդակցման տեսակներն ու տիպերը բազմազան են: Հաղորդակումը կարող է լինել միջանձնային և ներանձնային, ներխմբային և միջխմբային: Միջանձնային հաղորդակցումը երկու և ավել մարդկանց միջև տեղի ունեցող փոխհարաբերությունն է: Վաղ տարիքից մտնելով հաղորդակցման մեջ, երեխան իրեն համեմատում է մյուս երեխաների հետ և ինքն էլ աստիճանաբար աննկատելիորեն սկսում է <վարակվել> հաղորդակցման տվյալ ոլորտում տիրապետող մթնոլորտով ու իրեն պահում է իր ամենօրյա վարքագծին ոչ հատուկ ձևով: Ինչ վերաբերում է ներանձնային հաղորդակցմանը, ապա այն տեղի է ունենում միևնույն անձի ներսում՝ նրա տարբեր ԵՍ-

երի երկխոսության ընթացքում: Ներխմբային հաղորդակցման դեպքում իրար հետ են հաղորդակցվում միևնույն սոցիալական, էթնիկական, մասնագիտական խմբին պատկանող անձինք, իսկ միջխմբային հաղորդացումը դա հաղորդակցական փոխազդեցության մի այնպիսի ձև է, որի ընթացքում ինֆորմացիայի հոսքը ցիրկուլացվում է երկու կամ ավել թվով անձանցից բաղկացած սոցիալական խմբերի կամ կազմակերպությունների միջև որևէ համատեղ գործունեության նպատակով:

## 1.2 Ժամանակակից մեդիամիջավայր, դրա նշանակությունը և կարևորությունը երեխայի մոտ որպես հաղորդակցական ունակություն

Ժամանակակից հասարակության մշակույթը նախորդ ժամանակաշրջանների համեմատությամբ անսովոր փոփոխական է. նրա կողմնորոշիչները շատ ավելի արագ են փոխվում, քան երբևէ, ու բազմաթիվ ուղղություններով: Իսկ այդ մշակույթի առանցքը հիմնականում ԶԼՄ-ներն են, որոնցում ավելի ու ավելի մեծ թիվ են կազմում էլեկտրոնայիններները: Գլոբալ տեղեկատվականայնացումը բնական և մարդկային կենսագործունեության նոր միջավայր է ձևավորում: Եվ կրթությունը, որպես մշակույթի համակարգում հանդես եկող առանձնահատուկ գործունեություն, բնականաբար, չի կարող հեռու մնալ այս գործընթացից: Այս ամենի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար գործընթացը պետք է դիտարկել համակողմանիորեն՝ փիլիսոփայական, սոցիալական,մշակութային, հոգեբանական, մանկավարժական և այլ տեսակյուններից:

Մանկավարժական տեսանկյունից քննարկվում են հետևյալ խնդիրները.

- ուսուցման որակի ապահովում և կրթական բաց համակարգերի (բաց կրթության) կառուցման սկզբունքներ.
- տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները լրացուցիչ կրթության մեջ.
- նոր տեղեկատվական տեխնոլոգիաները՝ որպես ստեղծական կարողությունների և մասնագիտական կողմնորոշման միջոց.
- կրթության հոգեբանական, մանկավարժական խնդիրները տեղեկատվական հասարակության պայմաններում.

- տեղեկատվական հասարակության մեջ գլոբալիզացիան և կրթության ու կրթական ծառայությունների ինտեգրումը.
- տեղեկատվական տեխնոլոգիաների դաստիարակչական ազդեցությունը.
- տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը անհատի մտավոր զարգացման վրա և այլն:

Ժամանակակից հասարակության համակարգչայնացման և տեղեկատվականայնացման իրական գործընթացն է որոշել խնդրի տարբեր տեսանկյունները վերլուծող մի շարք ուսումնասիրությունների ուղղությունները.

- ուսուցման մեջ մարդու և մեդիայի փոխհարաբերության սոցիալ-փիլիսոփայկան և հումանիտար տեսանկուններ.
- առանձին մեդիաների ազդեցությունը երեխաների զարգացման, դաստիարակության և ուսուցման վրա.
- ուսուցման մեջ համակագչային տեխնիկայի օգտագործման հոգեբանական հիմնավորում.
- ժամանակակից ՏՏ միջոցների փոխանցած բռնության խնդիր:

Մանկապարտեզը պարտավոր է ծանոթացնել և սովորեցնել երեխային ԶԼՄների տարբեր տեսակների հետ, օգնել նրանց մեջ ճիշտ ընտրություն կատա ռելուն' ելնելով նրանց բովանդակությունից, որակից, տեղեկատվության ծավալից, ինքնակրթության և ինքնադաստիարակության նպատակով տեղեկատվու թյունն օգտագործելու նպատակահարմարությունից: Մանկապարտեզը ընտանիքի հետ միասին պետք է վերահսկի երեխաների վերաբերմունքը ինֆորմացիոն համա կարգերի, ծրագրերի նկատմամբ, պիտի կարողնա դրանք մանկավարժորեն ճիշտ օգտագործել ուսուցման և դաստիարակության գործում: Այլ խոսքով, մանկապարտեզը պետք է օգնի ընտանիքին' երեխայի տեղեկատվական միջավայրի մանկավարժականացման գործում, այսինքն' ծնողներին և երեխային սովորեց նի մանկավարժորեն գրագետ օգտագործել ԶԼՄ-ները' և հակառակը' կանխարգելել դրանց բացասական ազդեցությունները: Այս հարցում իրենց առանձնակի դերն ունեն նաև դաստիրարակը[3]:

Աշխատանքային եւ սոցիալական միջավայրերի, դրանցում գործածվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում են

[3] Саффхил Л. , Подростки- зрители мыльных опер, Массовая культура. современные западные исследования - Сборник статей - Часть I, www.fedy-diary.ru/html/112010/021/2010-02a.html.

անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ եւ հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման։ Բայց սա ճիշտ է ոչ միայն մարդկանց, այլեւ կազմակերպությունների, ինչպես նաեւ՝ ամբողջ հասարակության վերաբերյալ, քանի որ հասարակության կրթական մակարդակը եւ սովորելու կարողությունները սկզբունքային նշանակություն են ստանում երկրի զարգացման եւ միջազգային տնտեսական մրցունակության համար։ Մարդկանց սովորելու ունակությունները մեծացնելու եւ գիտելիքն արդիականացնելու խնդրի առաջնահերթության գիտակցումը, իր հերթին, ենթադրում է մշտական աշխատանք եւ նշանակալի ներդրումներ երկրի կառավարության կողմից։

Այսպիսով, մեդիամիջավայրում երեխաների հաղորդակցման կարողությունների ձևավորման առանձնահատկությունների դիտարկման արդյունքում կարող ենք եզրակացնել, որ այն բազմակողմանի ու բարդ գործընթաց է, մշտապես եղել և գտնվում է գիտության տարբեր ոլորտների՝ մանկավարժության, մեդիակրթության, հոգեբանության, հոգելեզվաբանության, լեզվաբանության, լեզվի դասավանդման մեթոդիկայի մասնագետների հետաքրքրությունների կիզակետում: Գլխավոր հարցը, որ քննվում է այս բնագավառների մասնագետների կողմից, հետևյալն է. մեդիամիջավայրում երեխաների լեզվամտածողությունը և հաղորդակցական կարողությունը ձևավորվում և դրսևորվում են գիտակցականի՞, թե՞ ենթագիտակցականի մակարդակում:

## Գլուխ 2. Հետազոտական մաս: Ավագ նախադպրոցականի հաղորդակցական ունակությունների զարգացման մանկավարժական պայմանները դերախաղի միջոցով

Դերային խաղը հաճախ կիրառում ենք, երբ անհրաժեշտ է զարգացնել երեխաների՝ միջանձնային հարաբերությունների հմտությունները (բանակցելու, հետադարձ կապ ստեղծելու և այլն): Դերային խաղերի կիրառությունը զարգացնում է երեխայի գործնական հմտությունները[4]:

Դիտարկենք դերային խաղերի հնարավոր տարբերակները.

- Դաստիարակը ներկայացնում է խաղընթացի նյութը և կատարում մի քանի հարցադրում: Երեխաները բաժանվում են փոքր խմբերի, և խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է դերային խաղ այդ հարցադրումներից մեկի վերաբերյալ: Սովորաբար այդ նպատակով երեխաները դիմում են իրական կամ երևակայական կոնկրետ դեպքի ներկայացմանը: Դեպքը ներկայացնելու ընթացքում մնացած երեխաները դիտում են: Ներկայացումներին հաջորդում են քննարկումները:
- Դաստիարակը ներկայացնում է խաղընթացի նյութը: Երեխաները բաժանվում են խմբերի, որոնցից յուրաքանչյուրը ստանձնում է իր դերը (օրինակ՝ ներկայացնողներ և ընդդիմախոսներ, կողմ և դեմ խմբեր և այլն): Կազմակերպվում է քննարկում, որի ընթացքում միաժամանակ վեր են հանվում և վերլուծվում բազմաթիվ խնդիրների տարբեր կողմերը:
- Խաղընթացի բնույթից և երեխաների ընդհանուր գիտելիքներից կախված՝ կարելի է դիմել նախկին փորձի ներկայացմանը: Այդ դեպքում երեխաները դիմում են իրենց իսկ փորձառությունից բխող իրավիճակին: Այդպիսի դերային ներկայացմանը հաջորդում է քննարկումը:
- Հնարավոր է կազմակերպել նաև առավել բարդ դերային խաղեր, դուրս գալ խաղի սահմաններից՝ առավել վաղ դերաբաժանում կատարելով և երեխաների ն բավականաչափ ժամանակ տրամադրելով՝ դերերը հետազոտելու և նախապատրաստվելու համար:

[4] Աստվածատրյան Ա. ուրիշներ, Նոր մոտեցումներ ու պատրաստման գործընթացին այլընտրանքային մեկնաբանություններ, 2004, էջ .22:

• Դերային խաղի մեկ այլ տարբերակի դեպքում դաստիարակը կատարում է դերաբաժանում, նա խապես հանձնարարում է որոշակի նյութ, դեր, և անկախ իր սեփական դիրքորոշումից՝ երեխան պարտավորվում է գործել, ներկայանալ իր ստանձնած դերին համապատասխան:

Մեթոդն արդյունավետ է, եթե ինքնանպատակ չէ, այսինքն նախապես հայտնի են ուղղվածությունն ու խնդիրները: Եվ որպեսզի այն տա դրական արդյունք, անհրաժեշտ է հետևել մի քանի բաղկացուցիչ տարրերի պահպանմանը: Այսպես՝

1. Դերային խաղի կիրառման դեպքում անհրաժեշտ է հստակեցնել ուսուցման նպատակը:

2. Նախապես պլանավորե՛ք լսարանում դերերի բաժանման ձևը:

3. Անհրաժեշտության դեպքում երեխաների ն նախապես ծանոթացրե՛ք վերլուծության նյութին:

4. Երբ զգում եք, որ երեխաները շեղվում են բուն նյութից, միջամտե՛ք նոր հարցադրումներով:

5. Դերախաղի ավարտին ներկայացնողներին և դիտորդներին առանձին հարցրե՛ք, թե ինչը նրանց առավել դուր եկավ, և ինչը կարելի էր փոփոխել:

6. Հարցրե՛ք երեխաների ն, թե դերային խաղի հատկապես ո՛ր հատվածն էր ուսուցանող, և ինչ սովորեցին արդյունքում:

7. Վերջում դու՛ս բերեք այն առանցքային հիմնախնդիրները, որոնց ուղղված էր դերային խաղը[5]:

Մեծահասակի հետ երեխայի համատեղ գործունեության սոցիալական իրադրությունը վերանում է: Մեծահասակից առանձնացումը ստեղծում է նոր սոցիալական իրադրություն, որում երեխան ձգտում է ինքնուրույնության: Միտումը բնական է և մշտական: Քանի որ երեխան արդեն գիտի, որ գոյություն ունեն մեծեր, ապա նրա առջև ծագում է մեծ մարդկանց բարդ աշխարհը: Մինչ այդ ժամանակը երեխան սովոր էր ապրել մեծերի հետ: Այս միտումը պահպանվում է, բայց պետք է լինի այլ համատեղ կյանք՝ երեխայի կյանք մեծահասակի կյանքում: Բայց այս տարիքում ևս երեխան չի կարող դեռևս մասնակցել այն կյանքին, որը պատկանում է մեծերին: ԵՎ մեծահասակների հետ համատեղ կյանքի իդեալական ձևը երեխայի համար դառնում է

[5] Մանկավարժություն, 2007 3-4:

խաղը: ՈՒստի նախադպրոցական տարիքի առաջատար գործունեության հիմնական տեսակը խաղն է: Առանձնացնում են հետևյալ տարրերը.

1.Մեծահասակի դերը, որը երեխան կրում է:

2.Հորինված իրադրություն, որը ստեղծվում է երեխայի դերի իրականացման համար, այս իրադրության բովանդակությունը կազմում է առարկաների (խաղալիքների) փոխարինումը:

3.Խաղային գործունեություն, քանի որ երեխան գործ չունի այն իրերի հետ, որոնք գործածում է մեծահասակը, ապա դրանց հետ չի կարելի աշխատել մեծերի նման, այլ կարելի է խաղալ:

Խաղն առաջատար է դառնում ոչ այն պատճառով, որ ժամանակակից երեխան որպես կանոն, իր ժամանակի մեծ մասն անց է կացնում խաղալով և համեմատաբար քիչ է ներգրավվում մեծահասակների աշխատանքային գործունեության մեջ: Խաղը երեխայի հոգեկանում որակական փոփոխություններ է առաջացնում: Նրանում սաղմնավորվում են ուսումնական գործունեության հիմքերը, որը առաջատար է դառնում դպրոցական տարիներին[6]: Խաղը ահռելի ազդեցություն ունի երեխայի անձի զարգացման վրա:

Միջավայրը իր երևույթների հարստությամբ և բազմազանությամբ, երեխային անընդհատ բացվող նոր ձևերով, որակներով և հարաբերություններով, հոգ է տանում նրա համար, որպեսզի երեխաները խաղան: Մեծահասակները պետք է ավելի շուտ երեխաներին չխանգարեն խաղալ, քան նրանց դրդեն խաղալու: Անհրաժեշտ է, որպեսզի երեխաներին շրջապատող մեծահասակները անտարբեր կամ բացասական վերաբերմունք չունենան մանկական խաղի նկատմամբ և այդ վերաբերմունքը չփոխանցվի երեխային: Առանց խաղային հնարավորության երեխայի ամբողջ գործունեությունը կնեղանար նրա սահմանափակ կենսական կարողությունների շրջանակով, բավարար չափով չէր զարգացնի նրա ֆունկցիաները և չէր հարստացնի միջավայրի հետ կապերն ու հարաբերությունները: Խաղի միջոցով երեխայի մոտ կազմվում և դաստիարակվում են կամ անտարբեր կամ դրական կամ էլ բացասական վերաբերմունք նրա կողմից վերարտադրվող երևույթների նկատմամբ, որոշ երևույթներով դարձնելով հետաքրքիր կամ ատելի:

---

[6] Столяренко Л.Д.-,Основы психологииե Ростов 2003, էջ 51:

Այսպիսով՝ երեխայի մոտ խաղ ձևավորելու համար անհրաժեշտ են.

ա) շրջապատում այնպիսի երևույթների և գործընթացների առկայություն, որոնք նոր են երեխաների համար և անմիջականորեն հասանելի

բ) միջավայրում այդ երևույթների կենսական նշանակալիությունը

գ) ինչ-որ մեկի կողմից դրանց նկատմամբ առավելապես դրական վերաբերմունքը:

Խաղը գործունեության տեսակ է, որի դրդապատճառը ոչ թե նյութական արդյունքն ու օգուտ ստանալն է, այլ հաճելի ապրումները, ընդունակությունների մարզումը, կապերի ստեղծումը: Խաղի տարբեր տեսակներ մեծ նշանակություն ունեն երեխայի օնտոգենետիկ զարգացման և հոգեկան հասունացման ապահովման համար:

Այս տարիքի հետ է կապված նաև զարգացման համար կարևոր գործունեության 2 տեսակների սկզբի հետ՝ աշխատանք և ուսում: Բացի խաղից նախադպրոցական տարիքում կան գործունեության այլ տեսակներ ևս, օրինակ նրա արդյունավետ ձևերը՝ նկարչություն, ծեփակերտում և այլն: Նրանց բնորոշ գիծն այն է, որ նրանք ունեն նպատակ, որն իրականացվում է հայտնի պայմաններում, հայտնի նյութերի օգտագործումով և հայտնի գործիքներով[7]:

Հոգեբանության մեջ տարբերում են խաղի տարբեր տեսակներ, որոնցից յուրաքանչյուրը ունի իր ուրույն առանձնահատկությունները և նպաստում է երեխաների հոգեկան որակների յուրահատուկ զարգացմանը: Խաղի տեսակներն են՝

**Ֆունկցիոնալ խաղեր** - արդեն 3–4 ամսական երեխայի վարքին հետևելիս դժվար չէ նկատել, որ նա հաճախակի կրկնում է նույնիսկ այն գործողությունները, որոնց նա լավ տիրապետում է: Դա կատարվում է այն պատճառով, որ երեխան այդ կրկնությունից հաճույք է ստանում: Այդպես է սկսվում նոր անձնավորության խաղային գործունեությունը: Նման բնույթ ունի նաև այդ տարիքում դիտվող նախաթոթովանքը: Հաճույք ստացող երեխան չի ձանձրանում, հետևապես կարելի է ասել, որ խաղալու առաջնային ներհոգեկան շարժիչ ուժերից մեկը ձանձրույթից խուսափելն է:

**Սիմվոլային խաղեր** – ֆունկցիոնալ խաղերը պահպանելով հանդերձ՝ 1–2 տարեկան հասակի երեխաները իրենց խաղային գործողությունների մեջ ներմուծում են նոր տարրեր, որոնք խոսում են սիմվոլային խաղերի սկզբնավորման մասին: Ֆունկցիոնալ խաղերից անցում է կատարվում սիմվոլային խաղերին, երբ որոշ առարկաներ

[7] Карнова С.Н., Лысюк Л.Г., Игра и нравственное развитие дошкольника, М 1986, էջ 52:

օգտագործվում են, որպես տվյալ իրադրության մեջ բացակայող առարկաների փոխարինողներ, օրինակ՝ երեխան խորանարդիկները շարելով տեղաշարժում է այդ կառույցը:

**Դերային խաղ** – 3-4 տարեկանում սիմվոլիկ խաղերի կողքին հանդիպում են միջանկյալ այնպիսի գործընթացներ, որոնք թույլ են տալիս կանխատեսել դերային խաղերի վրա հասնելը:

**Խաղեր ըստ կանոնների և խաղ-մրցություններ** - երեխաների տարիքին զուգընթաց խաղերը սկսում են անցկացվել որոշակի կանոններով և ինչ-որ նպատակ հետապնդել: Երեխաները որոշում են խաղի մասնակիցների գործողությունների հաջորդականությունը, որոշում են, թե ինչ է կարելի և ինչ չի կարելի, և հաճախ այնպիսի խաղեր են կազմակերպում, որոնցում կան հաղթողներ և պարտվողներ:

**Էլիմինացիոն խաղ** – այն խորապես ուսումնասիրել է Ժան Պիաժեն: Էլիմինացիոն խաղերը ուսումնասիրենք Պիաժեի բերած օրինակի վրա՝ փոքրիկ աղջիկը դրսում սատկած աղավնի է տեսնում և շատ ազդվում այդ պատկերից: Տուն վերադառնալով նա կրծքի վրա պառկում է հատակին և ասում է. □Ես հիմա մեռած աղավնի եմ□:

**Զգայական խաղ** - այս խաղի նպատակը զգայական փորձի ձեռքբերումն է: Երեխաները կարող են անընդհատ խաղալ ջրով, տարբեր խոտեր ծամել, աղմկել սպասքով կամ պոկել ծաղիկների տերևները, միայն այն բանի համար, որպեսզի հաճույք ստանա նոր ձայներից, հոտերից, համային և շոշափական զգայություններից:

**Շարժական խաղ** – վազք, թռիչքներ, գալարներ՝ սրանք մի քանիսն են այն բազմաթիվ շարժումներով խաղերից, որոնցից երեխաները հաճույք ստանում են հենց խաղային պրոցեսի շնորհիվ: Մանկիկը, մեծահասակի մասնակցությամբ, կարող է երկար իրականացնել միևնույն գործողությունը, որը ոչ միայն երեխաներին էներգիա է հաղորդում, այլ նաև նրանց համար հանդիսանում է սեփական մարմնի շարժումները կոորդինացնելու դրական, տհաճ զգացողություններից զուրկ վարժություն:

**Խաղ – քաշքշուկ** – ծնողներն ու դաստիարակները հաճախ փորձում են երեխաներին հետ վարժեցնել այն խաղերից, որոնք վերածվում են քաշքշոցի և երեխաներին այդքան շատ դուր են գալիս: Ծնողները սովորաբար ձգտում են փոքրացնել մանկական ագրեսիվությունը և թույլ չտալ, որ երեխաների միջև կռիվ լինի: Բայց խաղ-քաշքշուկը իսկական կռիվ չէ:

**Լեզվական խաղ** - երեխաները սիրում են խաղալ բառերով: Նրանք փորձում են լեզվի ռիթմիկ կառուցվածքը և երաժշտականությունը, միավորում են բառերն իրար հետ՝ նրանց նոր նշանակություն տալով:

Ա.Մ. Գորկին գտնում էր, որ խաղը երեխաների համար ճանապարհ է դեպի իմացության աշխարհ, որում նրանք ապրում են և որը կոչված են փոխելու: 7 տարեկանից հետո խաղը երեխաների կյանքում սկսում է քիչ տեղ զբաղեցնել:

Կ. Օտալորան, երեխաների ամենօրյա գործունեության սեփական դիտումների հիման վրա վերլուծել է մանկական խաղերի առանձնահատկությունները: Հենվելով Էլկոնինի կոնցեպցիայի վրա, նա բացահայտել է տարբեր տարիքի երեխաներին առավել բնորոշ խաղերի տեսակները.

**Խաղ-զվարճանք** – նրա նպատակը մասնակիցներին ուրախացնելն է (օրինակ բռնել իրար և խուտուտ տալ):

**Խաղ-վարժանք** - բացակայում է սյուժեն, գերակշռում են ֆիզիկական գործողությունները, որոնք կրկնվում են (սողալ գերանի վրայով, կռվել իրար հետ և այլն):

**Սյուժետային խաղ** - առկա են խաղային գործողություններ և երևակայական իրադրություն: Առավել հաճախ հանդիպող խաղերն են կերակուրի պատրաստումը և մրգերի հավաքումը:

**Գործընթացային-ընդօրինակող խաղ** - այն գործողությունների կամ իրադրությունների վերարտադրությունն է, որոնք երեխան տեսել է ռեալ կյանքում (օրինակ՝ աղջիկը շվիի ձայն է լսում, նույն պահին նա փայտիկ է վերցնում, փչում նրա մեջ):

**Ավանդական խաղ** - այն, որը փոխանցվում է սերընդեսերունդ, ունի կանոններ:

Մանկական խաղն ունի պատմական և սոցիալական, և ոչ թե կենսաբանական բնույթ: Տարբեր մշակույթներում ու հանրույթներում մանակական խաղերը փոխում են իրենց բովանդակությունն ու ձևերը:

Խաղային գործունեությունը ազդում է հոգեկան գործընթացների կամայինության ձևավորման վրա: Այսպես, խաղում երեխաների մոտ սկսում են զարգանալ կամային ուշադրությունն ու հիշողությունը: Խաղի պայմաններում երեխաներն ավելի լավ են կենտրոնանում և շատ մտապահում, քան լաբորատոր փորձերի ժամանակ: Եթե

երեխան ուշադիր չէ նրա նկատմամբ, ինչ իրենից պահանջում է խաղային իրադրությունը, եթե չի մտապահում խաղի պայմանները, ապա նա պարզապես վռնդվում է հասակակիցների կողմից: Շփման, հուզական խրախուսանքի պահանջմունքը երեխային հարկադրում են նպատակաուղղված կենտրոնացում և մտապահում:

Խաղը շատ մեծ ազդեցություն է գործում խոսքի զարգացման վրա: Եթե երեխան ի վիճակի չէ խաղի ընթացքի վերաբերյալ իր ցանկությունները հստակորեն արտահայտելու, եթե չի հասկանում խաղընկերների հրահանգները, ապա նրա ներկայությունը բեռ է դառնում մյուս մասնակիցների համար: Այս պայմաններում առաջացող հուզական անբարեկեցիկ վիճակը խթանում է խոսքի զարգացմանը:

Խաղային իրադրությունները և նրա հետ կատարվող գործողությունները մշտական ներգործություն են ունենում նախադպրոցական տարիքի երեխայի մտավոր զարգացման համար: Աստիճանաբար առարկաների հետ խաղային գործողությունները կրճատվում են, երեխան սովորում է մտածել առարկաների մասին և գործել նրանց հետ մտավոր մակարդակում: Խաղը մեծ չափով նպաստում է նրան, որ երեխան աստիճանաբար անցնում է պատկերացումային մտածողության:

Երեխայի մտավոր զարգացման մասին Ժան Պիաժեի ստեղծած տեսության մեջ կան մտածողության և ընկալման այն առանձնահատկությունները, որն արտահայտվում է հետևյալ կերպ. երեխան շրջապատը և մարդկանց կարող է ընկալել և գնահատել միայն իր տեսակետից, մտովի կարող է կանգնել ուրիշի տեսակետի վրա: Այս երևույթը Պիաժեն անվանում է էգոցենտրիզմ (եսակենտրոնություն): Էգոցենտրիզմի հետևանքներն են երեխայի մտածողության այնպիսի առանձնահատկությունները, ինչպիսիք են սինկրետիզմը, հակասությունների նկատմամբ անզգայունակությունը: Էգոցենտրիզմը հանգեցնում է նաև սուբյեկտիվիզմի և սեփական ընկալումները ուրիշներին վերագրելուն: Դերային խաղը վճռորոշ նշանակություն ունի երևակայության զարգացման համար: Խաղային գործունեության մեջ երեխան սովորում է փոխարինել մի առարկան մյուսով, իր վրա տարբեր դերեր վերցնել: Այս ամենը նպաստում է երևակայության զարգացմանը[8]:

[8] Мухина В.С., Возрастная психология, М. 1996, էջ 63:

Խաղի ազդեցությունը երեխայի անձի զարգացման վրա կայանում է նրանում, որ նրա միջոցով նա ծանոթանում է մեծ մարդկանց վարքի և փոխհարաբերությունների հետ, որոնք օրինակ են դառնում նրա սեփական վարքի համար, և նրանում է երեխան ձեռք բերում շփման հիմնական հմտությունները, որակները, որոնք անհրաժեշտ են հասակակիցների հետ շփման համար:

Գրավելով երեխային և նրան ստիպելով ենթարկվել իր վերցրած դերի կանոններին, խաղը նպաստում է զգացմունքների և վարքի կամային կարգավորման զարգացմանը:

Խաղային գործունեության ներսում սկսում է ձևավորվել նաև ուսումնականը, որն առավել է առաջատար: ՈՒսուցման տարրերը մտցնում է մեծահասակը, դրանք չեն բխում անմիջականորեն խաղից: Նախադպրոցականը սկսում է սովորել խաղալով, նա ուսուցմանը վերաբերվում է որպես յուրահատուկ դերային խաղ իր որոշակի կանոններով: Սակայն պահպանելով այդ կանոնները՝ երեխան իր համար աննկատ յուրացնում է տարրական ուսումնական գործողություններ: Նախադպրոցականի մոտ հայտնվում է սովորելու ցանկություն և կազմավորվում են առաջնային կարողությունները:

Մարդկային պատմության մեջ խաղալիքը ծագում է որպես երեխայի իրեն ժամանակակից հասարակական հարաբերությունների համակարգին նախապատրաստելու միջոց: Խաղալիքը իր է, որը ծառայում է ուրախանալուն և զվարճանալուն, սակայն միևնույն ժամանակ հանդիսանում է երեխայի հոգեկանի զարգացման միջոց:

Մանկության տարիքում երեխան ստանում է խաղալիքներ, որոնք որոշում են նրա վարքային ակտիվության բովանդակությունը, նրա մոնիպուլյացիաներ անելը: Նա ուշադիր զննում է իր առջև կախված խաղալիքները, ինչը վարժեցնում է նրա ընկալումը:

## Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով վերոնշյալ թեման, եկանք այն եզրահանգման, որ Հաղորդակցությունը տեղեկությունների փոխանցման գործընթացն է, որը կատարվում է իմաստավոր շարժումներով՝ խոսք, մարմնի լեզու, դիմաղաղ, մամուլի կամ էլեկտրոնային փոստի մեդիա հաղորդագրություններով՝ համակարգիչ, հեռախոս, ռադիո, հեռուստատեսություն: Հենց այս աղբյուրներից երեխաները լսում, տեսնում և վերցնում են տեղեկատվությունը, ինչն էլ որոշակի բառապաշարով, քերականական ճիշտ կամ սխալ կառույցով, կապակցված կամ ոչ կապակցված խոսքով փոխանցում շրջապատին: Հաղորդակցումը հասարակական սուբյեկտների /անձ, սոցիալական խումբ/ փոխներգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում տեղեկության, փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակում:

Ժամանակակից հասարակության մշակույթը նախորդ ժամանակաշրջանների համեմատությամբ անսովոր փոփոխական է. նրա կողմնորոշիչները շատ ավելի արագ են փոխվում, քան երբևէ, ու բազմաթիվ ուղղություններով: Իսկ այդ մշակույթի առանցքը հիմնականում ԶԼՄ-ներն են, որոնցում ավելի ու ավելի մեծ թիվ են կազմում էլեկտրոնայիններները: Գլոբալ տեղեկատվականայնացումը բնական և մարդկային կենսագործունեության նոր միջավայր է ձևավորում: Մեդիամիջավայրում երեխաների հաղորդակցման կարողությունների ձևավորման առանձնահատկությունների դիտարկման արդյունքում կարող ենք եզրակացնել, որ այն բազմակողմանի ու բարդ գործընթաց է, մշտապես եղել և գտնվում է գիտության տարբեր ոլորտների՝ մանկավարժության, մեդիակրթության, հոգեբանության, հոգելեզվաբանության, լեզվաբանության, լեզվի դասավանդման մեթոդիկայի մասնագետների հետաքրքրությունների կիզակետում: Գլխավոր հարցը, որ քննվում է այս բնագավառների մասնագետների կողմից, հետևյալն է. մեդիամիջավայրում երեխաների հաղորդակցական կարողությունը ձևավորվում և դրսևորվում են գիտակցականի՞, թե՞ ենթագիտակցականի մակարդակում:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Բաղալյան Օ., ՈՒսում և մտավոր զարգացում, Եր. 2001.
2. Եղիազարյան Ա., Ազգային դպրոց և ազգային գրականություն, Գիտելիք 1, 2001.
3. Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ. և ուրիշներ, Ուսուցման կոնստրուկտիվիստական մեթոդաբանություն, ԱՅՐԵՔՍԵ, Երևան, 2002.
4. Ղազարյան Գ. Հ., Հոգեկան խթանման ազդեցությունը ուսուցման արդյունավետության վրա, Գիտելիք 1, 2002.
5. Մանտուլենկո Վ., Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում, http://notebook.mskh.am/
6. Պոլատ Ե. Խ., Կրթական համակարգերի զարգացման հիմնական միտումները համաշխարհային մանկավարժական պրակտիկայում, Գիտելիք 1, 2001.
7. Маршал Маклюэн, “Понимание медия: внешние расширения человека”, Москва, “Гипербория”, 2007г.
8. Мухина В.С. Возрастная психология: феноменология развития, детство, отрочество: Учебник для вузов. – М.: Академия, 2003.
9. Саффхил Л., Подростки- зрители мыльных опер, Массовая культура. современные западные исследования - Сборник статей - Часть I, www.fedy-diary.ru/html/112010/021/2010-02a.html.
10. Шуман С.Г. Школьный конфликт глазами психолога. // Педагогика, 2001. №9.